



ԳԱՆՏԱՎԱՅՈՅ ԹԵՄ ԴԻՕԵՏԵ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱԴԱ

ԿԱՆՏԱՎ

ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GREGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՆՍՐ

ԿԻՐԱԿԻ, 11 ՅՈԿՏԵՄԲԵՐ 2020

187

DIMANCHE, 11 Octobre 2020



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ե Կիրակի Ձկնի Սրբոյ Խաչին
ՏՕՆ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

**5^{ÈME} DIMANCHE APRÈS LA SAINTE CROIX
FÊTE DE NOS DOCTEURS-TRADUCTEURS**

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ (2.1-10)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (12.35-44)

Les lectures de la Bible d'aujourd'hui

GALATES 2.1-10 / MARC 12.35-44

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐՇ. Տ. ԴԱԻԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Célébration et l'Homélie
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն -	9:30-ին
Office Matines à	9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում -	10:30-ին
La Sainte Messe – En direct à	10h30
Հոգեհանգստեան	
յատուկ պաշտօն - ուղիղ սփռում- ժամը	12:00-ին
Spécial Office Réquiem - En direct à	12h00

DIACRES – ACOLYTES

Organiste: Mme Houry Manougian

Chœur “Gomidás”

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 2.1-10

Յետոյ, տասնչորս տարի ետք, դարձեալ բարձրացայ Երուսաղէմ՝ առնաբասի հետ, Տիտոսն ալ միասին առնելով: 2 Բարձրացած էի յայտնութեամբ, եւ անոնց ներկայացուցի այն ակետարանը՝ որ հեթանոսներուն մէջ կը քարոզեմ. բայց առանձին անոնց՝ որ երեւելիներ էին, որպէսզի ընդունայն չվագեմ կամ վագած չըլլամ: 3 Բայց ո՛չ իսկ ինծի հետ եղող Տիտոսը, որ Յոյն էր, արկադրուեցաւ թլփատուիլ՝ 4 գաղտնի ներս բերուած սուտ եղբայրներուն պատճառով, որոնք ներս սպրդած էին՝ լրտեսելու համար Զրիստոս Յիսուսով մեր ունեցած ազատութիւնը, որպէսզի ստրուկ ընեն մեզ. 5 անոնց տեղի չտուիք՝ նոյնիսկ քիչ մը ատեն՝՝ ենթարկուելով, որպէսզի ակետարանին ճշմարտութիւնը ձեր մէջ մսայ: 6 Իսկ անոնք որ կը կարծուէին բան մը ըլլալ - ինչ որ էին՝ ատիկա ինծի հարց չէ, քանի որ Աստուած մարդոց աչառութիւն չ'ըներ -, այնպէս կարծուածները ակելի ոչինչ հաղորդեցին ինծի. 7 հապա՛ ընդհակառակը, երբ տեսան թէ անթլփատներուն ակետարանը ինծի վստահուած է, ինչպէս Պետրոսի ալ՝ թլփատուածներունը, 8 (որովհետեւ ան որ ներգործեց Պետրոսի մէջ՝ թլփատուածներուն առաքելութեան համար, նոյնպէս ներգործեց իմ մէջս՝ հեթանոսներուն հանդէպ,) 9 ու երբ Յակոբոս, Կեփաս եւ Յովհաննէս, որոնք սիւներ կարծուած էին, գիտակցեցան ինծի տրուած շնորհքին, իրենց աջ ձեռքը տուին ինծի ու Բառնաբասի՝ իբր նշան հաղորդակցութեան, որպէսզի մենք քարոզենք հեթանոսներուն, իսկ իրենք՝ թլփատուածներուն: 10 Միայն թէ կ'ուզէին որ աղքատները յիշենք, ինչ որ ես ալ փութաքցի ընելի:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 12.35-44

35 Երբ Յիսուս կը սորվեցներ տաճարին մէջ՝ ըսաւ. «Ղալիրները ի՞նչպէս կ'ըսեն թէ «Զրիստոս Ղալիթի որդին է»: 36 Արդարեւ ի՞նք՝ Ղալիթ՝ Սուրբ Հոգիով կ'ըսէ. «Տերը ըսաւ իմ Տերոջս. «Բազմէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ

պատուանդան դնեմ ուղքերուդ»»: 37 Ուրեմն ի՛նք՝ Դավիթ՝ Տեր կը կոչէ գայն. ի՛նչպէս ան կ'ըլլայ իր որդին»: Բազմութենէն շատեր հաճոյքով մտիկ կ'ընէին անոր: 38 Իր ուսուցումին մէջ կ'ըսէր անոնց. «Չգուշացէ՛ք դպիրներէն, որոնք կ'ուզեն երկայն հանդերձներով շրջիլ, կը փնտռեն բարեւները՝ հրապարակներուն վրայ, 39 առաջին աթոռները՝ ժողովարաններու մէջ, եւ առաջին բազմոցները՝ ընթրիքներու մէջ. 40 որոնք կը լափեն այրիներուն տունները, ու իբր պատրուակ՝ աղօթքը կ'երկարեն: Ասոնք աւելի՛ խստութեամբ պիտի դատուին»»: 41 Յիսուս գանձանակին դիմաց նստած՝ կը նայէր թէ բազմութիւնը գանձանակին մէջ ի՛նչպէս դրամ կը ձգէ: Շատ հարուստներ՝ շատ բան ձգեցին: 42 Աղքատ այրի մըն ալ եկաւ ու երկու լումայ ձգեց, որ նաքարակիտ մը կ'ընէ: 43 Իր աշակերտները կանչելով իրեն՝ ըսաւ անոնց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ այս աղքատ այրին՝ գանձանակը դրամ ձգողներուն բոլորէն աւելի ձգեց. 44 որովհետեւ բոլորը իրենց առատութենէն ձգեցին, բայց ան՝ իր կարօտութենէն՝ ձգեց իր ամբողջ ունեցածը, իր ամբողջ ապրուստը»:

GALATES 2.1-10

1Depuis je montai encore à Jérusalem quatorze ans après, avec Barnabas, et je pris aussi avec moi Tite. 2Or j'y montai par révélation, et je conférai avec ceux [de Jérusalem] touchant l'Evangile que je prêche parmi les Gentils, même en particulier avec ceux qui sont en estime, afin qu'en quelque sorte je ne courusse, ou n'eusse couru en vain. 3Et même on n'obligea point Tite, qui était avec moi, à se faire circoncire, quoiqu'il fût Grec. 4Et ce fut à cause des faux frères qui s'étaient introduits dans [l'Eglise], et qui y étaient entrés couvertelement pour épier notre liberté, que nous avons en Jésus-Christ, afin de nous ramener dans la servitude. 5Et nous ne leur avons point cédé par aucune sorte de soumission, non pas même un moment; afin que la vérité de l'Evangile demeurât parmi vous. 6Et je ne suis en rien différent de ceux qui semblent être quelque chose, quels qu'ils aient été autrefois, (Dieu n'ayant point d'égard à l'apparence extérieure de l'homme) car ceux qui sont en estime ne m'ont rien communiqué [de plus]. 7Mais, au contraire, quand ils virent que la Prédication de l'Evangile du Prépuce m'était commise, comme celle de la Circoncision l'était à Pierre : 8(Car celui qui a opéré avec efficace par Pierre en la charge d'Apôtre envers la Circoncision, a aussi

opéré avec efficace par moi envers les Gentils.) 9Jacques, dis-je, Céphas, et Jean (qui sont estimés être les Colonnes) ayant reconnu la grâce que j'avais reçue, me donnèrent, à moi et à Barnabas, la main d'association, afin que nous allassions vers les Gentils, et qu'ils allassent eux vers ceux de la Circoncision; 10[Nous recommandant] seulement de nous souvenir des pauvres; ce que je me suis aussi étudié de faire.

MARC 12.35-44

35Et comme Jésus enseignait dans le Temple, il prit la parole, et il dit : comment disent les Scribes que le Christ est le Fils de David?

36Car David lui-même a dit par le Saint-Esprit : le Seigneur a dit à mon Seigneur : assieds-toi à ma droite, jusqu'à ce que j'aie mis tes ennemis pour le marchepied de tes pieds.

37Puis donc que David lui-même l'appelle [son] Seigneur, comment est-il son fils? Et de grandes troupes prenaient plaisir à l'entendre.

38Il leur disait aussi en les enseignant : donnez-vous garde des Scribes, qui prennent plaisir à se promener en robes longues, et [qui aiment] les salutations dans les marchés. 39Et les premiers sièges dans les Synagogues, et les premières places dans les festins; 40Qui dévorent entièrement les maisons des veuves, même sous le prétexte de faire de longues prières. Ils en recevront une plus grande condamnation.

41Et Jésus étant assis vis-à-vis du tronc prenait garde comment le peuple mettait de l'argent au tronc. 42Et plusieurs riches y mettaient beaucoup; et une pauvre veuve vint, qui y mit deux petites pièces, qui font la quatrième partie d'un sou. 43Et [Jésus] ayant appelé ses Disciples, il leur dit : en vérité je vous dis, que cette pauvre veuve a plus mis au tronc que tous ceux qui y ont mis. 44Car tous y ont mis de leur superflu; mais celle-ci y a mis de son indigence tout ce qu'elle avait, toute sa subsistance.



Չինուորի աղօթք

Ամենակարող Տէր, Քու Աստուածային զօրութեամբդ
ամրացուր զիս, Տուր ինձի վճռականութիւն՝ սուրբ
հայրենեաց քաջ պաշտպանը ըլլալու:

Քու հոգեւոր սպառազինութեամբդ դարձուր զիս
աւելի համարձակ, կարգապահ ու ընկերասեր:

Երկնային Չօրքիդ բարեխօսութեամբ զօրացուր եւ
պահպանէ զինակիցներուս, հրամանատարներուս եւ
զիս:

Քու Սուրբ Աջիդ եւ բարի հայեացքիդ ներքոյ ապահով
ու անվիրով պահէ ազգս հայոց:

Եւ Քեզ փառք Հօր եւ Սուրբ Հոգիի հետ. ամէն:



ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵՎԵՂԵՑՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Mr. & Mrs. Jerry & Taline Devletian \$500
Mrs. Hilda Kepekci \$250
Mr. Raci Altan \$100
Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$75

LADIES AUXILIARY COMMITTEE:

Mrs. Hilda Kepekci \$100

RENOVATION FUND:

Mrs. Magda Zakarian \$1000
Mr. & Mrs. Aret Tasciyan \$100
Mr. & Mrs. Robert & Zarouhi Kechayan \$100

ARTZAKH HUMANITARIAN FUND:

Mr. Kevork Keorhadzian \$30000
Mr. & Mrs. Krikor & Rose Dikranian \$2000
Mr. & Mrs. Antranik & Anna Dulbinci & Family \$2000
Mrs. Yelena Mikayelyan \$1000
Mr. & Mrs. Murat & Maggie Ozcanian \$1000
Mr. & Mrs. Garo & Georgette Nichanian \$1000
Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$1000
Mr. & Mrs. Jerry & Taline Devletian \$1000
Mrs. Hasmig Belleli \$1000
Mrs. Karen Margossian \$1000
Mr. & Mrs. Hratch & Salpi Nerdjivanian \$750
Mr. Gagik Avagyan \$500
Serkos Bijouterie \$500
Mr. & Mrs. Avedis & Mary Basmadjian \$500
Mr. Hratch Mouradian \$500
Fr. David & Hripsime Margaryan \$500
Anonymous \$500
Mr. & Mrs. Varoujan & Hasmig Margossian \$500
Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan \$500
Mrs. Irma Basmajian \$350
Mr. & Mrs. Roupon & Meline Arsever \$300
Mrs. Zinaida & Mrs. Nina Varosian \$300
Mr. & Mrs. Martin & Sossie Marasliyan \$300
Mrs. Choughik Krikorian \$250
Mrs. Rachel Doramajian \$250
Mr. Frederick Kalinian \$250
Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$200
Miss Shoghig Kochakejian \$200
Mr. Levon Simonyan \$200
Mr. Hayg Ghazryan \$150

Mrs. Karmen Ketli \$100
Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$100
Mr. & Mrs. Ara & Mary Gerikyan \$100
Mr. Aret Sonmez \$100
Mrs. Hilda Kepekci \$100
Mr. & Mrs. Avedis Djhanian \$100
Mr. & Mrs. Garbis & Hasmik Aposhian \$100
Msr. Marguerite Kazarian \$100
Mr. Jano Yeghiayan \$100
Mrs. Magda Zakarian \$100
Mr. Arouche Demirdjian \$100
Mr. Gagik Tamrazian \$100
Mr. Hayk Petrosyan \$100
Mrs. Silva Amadouni \$100
Mrs. Sonia Kalpakdjian \$100
Mrs. Silva Bekarian \$100
Mr. Robert Sert \$100
Miss Shoushan Aroyan \$100
Mrs. Seta Artokun \$75
Mrs. Maral Boghossian \$50

HOKEHANKISD:

THE LATE ARTO TCHAMAKCHIAN:

Mrs. Nairi Tchakmaktchian \$100
Miss Astrid Tchakmaktchian \$50
Mr. & Mrs. Krikor & Elizabeth Tchakmaktchian \$50

THE LATE CANKUL & ATAMIAN FAMILIES:

Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$200
Mr. & Mrs. Nurhan & Hasmik Cankul \$100

THE LATE SHAHNUR & ATHINA KARAARTINYAN:

Mr. & Mrs. Arie & Eugenia Karaartinian \$100

THE LATE NERSES AROYAN:

Miss Shoushan Aroyan \$100

IN LIEU OF FLOWERS:

THE LATE HARUT MIGIRDIC:

Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$100

THE LATE BERDJ KETLI:

Mrs. Karmen Ketli \$100

**Our heartfelt thanks for all your support and donation
made for the safety and salvation of motherland
Armenia and Artsakh!**



**ՄԱՍՆԱԿՑԻՆԷ ՀԱՅՈՑ ԶԱԶԱՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ
ՅԱՆՈՒՆ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻԻԷԻ ԵՒ ԱՐՑԱՆԻ
ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ**

Մայր Հայրենիքի եւ ի մասնաւորի Արցախի դիմազրաւած դժնդակ իրավիճակներուն, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, որպէս սփիւռքահայեր բերենք մեր հնարաւորութիւններն ու ջանքերը մէկտեղենք եւս վասն մեր Մայր Հայրենիքի փրկութեան եւ ազատագրութեան:

Ձեր մասնակցութեան համար

ՍԿՍԵԱԼ - Ուրբաթ 2 Հոկտեմբերէն – Ուրբաթ 9 Հոկտեմբեր 2020

Եկեղեցոյ գրասենեակը բաց պիտի ըլլայ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ երեկոյեան ժամը 8-ը կարելի է հեռաձայնել՝ Նաեւ՝ հետեւեալ **անմիջական թիւերէն** մէկուն՝

Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066
Եւ կամ հետեւեալ պատասխանատու անձերուն
(514) 865-3911, (514)825-5612 եւ (514)792-2866:

Կարելի է այցելել Եկեղեցոյ կայքէջը

Website: Saintgregory.ca կամ armenianchurch.ca –

Artzakh Humanitarian Fund

Faire un don



Նուիրատուութեան դիմաց – ստանալ տուրքէ գերծ ստացագիր:

Իրաքանչիւր Հայորդի իր մասնակցութեամբ կ'արտայայտէ իր ազգային գիտակցութիւնն ու հայրենասիրական պարտաւորութիւնը ի գին հայրենի հողին փրկութեան:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 - Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

stgregorychurch@gmail.com



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՄՐՏԱԲՈՒԽ ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ՆՊԱՍ

ՄԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ

Գիտակցելով այս օրերու դժուարություններն, համեստորեն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, կատարել իրենց սրտաբուխ նուիրատուութիւնները այցելելով Եկեղեցոյ կայքէջը Website - Saintgregory.ca

Faire un don



Շնորհակալութիւն

**YOUR HEARTFELT DONATIONS
FOR THE SUPPORT OF OUR CHURCH:**

Concerning the difficulties that we are facing to those days; we humbly ask our parishioners to remember St. Gregory the Illuminator Armenian Cathedral for the glory of our Church.

Your donations can also be made through:

Church website – saintgregory.ca by:

Faire un don



Thank You!

SOLER

Շաբաթ, 10 Հոկտեմբեր 2020

**Ս. Թարգմանիչ Վարդապետներու՝
Մեսրոպի, Եղիշէի, Մովսէս Զերթողի,
Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայի, Գրիգոր
Նարեկացիի եւ Ներսէս Կլայեցիի տօն**



«Մեր լեզուն ճանապարհն է դէպի
յաւերժութեան, գրաւական՝ մեր
ինքնութեան, Նոյան տապան՝ մեր
փրկութեան, լուսաստղ՝ մեր
գոյութեան»:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

Սուրբ թարգմանիչ Վարդապետներու տօնը Հայ ժողովուրդի ամենանուիրական եւ սիրուած ազգային-եկեղեցական տօներէն է: Թարգմանիչ վարդապետներու յիշատակը Հայ եկեղեցին կը տօնէ տարին երկու անգամ: Առաջինը կը կոչուի «Տօն Սրբոց Թարգմանչացն Մերոց Սահակայ եւ Մեսրոպայ» եւ կը տօնուի Հոգեգալստեան չորրորդ Կիրակիին յաջորդող Հինգշաբթի օրը: Երկրորդը կը կոչուի «Տօն Մեր Սուրբ Թարգմանիչ Վարդապետներու՝ Սահակի եւ Մեսրոպ Մաշտոցի, եւ անոնց սուրբ աշակերտներու՝ Եղիշէ Պատմիչի, Մովսէս Զերթողի, Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացիի եւ Ներսէս Կլայեցիի», որ շարժական է եւ տօնը կը նշուի Հոկտեմբեր 3-էն մինչեւ Նոյեմբեր 7-թը ժամանակահատուածով: Թարգմանիչ ընդհանուր անուան տակ յայտնի են Ս. Մեսրոպ Մաշտոցին եւ Ս. Սահակ Պարթեւին աշակերտած շուրջ հարիւր սաներ:

Սկզբնական շրջանին կային յատուկ թարգմանիչներ, որոնք արարողութիւններու ժամանակ Ս. Գիրքի հատուածները բանաւոր կը թարգմանէին Հայերէն: Սակայն այդ բաւարար չէր: Այս հարցին շուրջ մտահոգուած էր Ս. Մեսրոպ Մաշտոցը: Հայը զրկուած էր Ս. Գիրքը ընթերցելու եւ ճշմարտութիւնն ու փրկութիւնը ձեռք բերելու հնարաւորութենէն: Ան անընդհատ կը մտածէր Ս. Գիրքը Հայերէնի վերածելու գաղափարին շուրջ, որուն իրականացման համար ալ կը դիմէ Հայոց կաթողիկոսին՝ Ս. Սահակ Պարթեւին եւ մեծ ընդունելութիւն կը գտնէ: Կը պարզուի, որ կաթողիկոսը Նոյնպէս մտահոգուած է այդ

հարցով: Անոնց ծրագիրներուն իր հաւանութիւնը կու տայ նաեւ թագաւորը՝ Վռամշապուհ Արշակունին: Ս. Մաշտոցը, իր հետ վերցնելով իր աշակերտները, կ'երթայ Ասորիքի Միջագետք, կը հանդիպի Եդեսիայ, ուր եւ տեղի կ'ունենայ ամենամեծ հրաշքներէն մէկը. «Մեսրոպը կ'ապաւինի Աստուծոյ պահքով ու աղօթքներով: Եւ Աստուած, որ կը կատարէ իրմէ երկիւղ կրողներուն կամքը, կը լսէ Մեսրոպի աղօթքները եւ ցոյց կու տայ անոր գիրերը սքանչելի տեսիլքով, եւ ո՛չ թէ երագի մէջ քնացած ժամանակ, այլ արթո՛ւն աչքով իմանալի եւ աչքի տեսանելիքով զգալի: Մեսրոպը կը տեսնէ, որ աջ ձեռքի դաստակով կը գրէ վէմի վրայ, որ դրուած էր անոր առջեւը: Եւ գիրի փորուածքը այնպէս մըն էր, ինչպէս որ ձեռքն էր որ ձեւ կու տար վէմին վրայ. եւ գիրերու տարբերութիւններն ու անունները կը ձեւաւորուէին Մեսրոպի մտքին մէջ» (Մ. Խորենացի «Յայոց Պատմութիւն»):


Ունենալով Յայ նշանագրերը՝ Ս. Մեսրոպը Հռոմէական սիսի ձեւաւորել անոնք: Ստանալով արդէն գրելու պատրաստ տառերը՝ Ս. Մեսրոպը առաջին անգամ կը թարգմանէ Ս. Գիրքի հետեւեալ տողը. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» ('Ճանաչել իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը'), որ առնուած է Սողոմոնի «Առակաց» գիրքէն: Ահա սա էր, որ եղաւ առաջին Յայատառ նախադասութիւնը՝ գրուած Յայ ուսուցիչի ձեռքով: Բացայայտ իմաստութիւն մը, որով բոլորին համար հասկնալի պէտք է դառնար խօսքը եւ Գիրքը ընթերցելու անհրաժեշտութեան գաղափարը: Այս Աստուածատուր նուէրէն յետոյ Ս. Մեսրոպը կը վերադառնայ Յայաստան՝ հետը բերելով անգին գանձ մը, որ ըլլալու էր Յայ ժողովուրդի հետագայ դարերու մաքառման զէնքը, ինչպէս նաեւ՝ անոր գոյատեւման առհաւատչեան: Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի քանքերով Յայաստանի մէջ կը սկսին բացուիլ դպրոցներ, ուր կ'ուսուցանուին Յայ գիրերը:

Անոնք իրենց աշակերտներուն հետ ձեռնամուխ կ'ըլլան Ս. Գիրքի թարգմանութեան: Այսպէսով, Քրիստոնէութիւնը կը Յայացուի եւ կը դառնայ Յայուն կենսակերպը:

HOLIDAY

Saturday, October 10, 2020

Feast of the Holy Translators - Sts. Mesrob, Yeghishe, Moses of Khoronk, philosopher Davit Anhaght, Gregory of Narek and Nerses the Gracious (Nerses of Kla)



For the Armenian people the Feast of the Holy Translators is one of the most favorite and beloved national-ecclesiastical feasts. Nearly two hundred disciples of St. Mesrob Mashtots and St. Sahak are known by the general group name “Holy Translators”. The disciples of the above-mentioned group of Holy Translators are known as “Junior Translators”. Celebrating this feast, the Armenian Apostolic Church pays tribute of respect to the bright memory of St. Mesrob Mashtots, Yeghishe, Moses of Khoronk, philosopher Davit Anhaght, whose sacred work and mission later has been continued on by St. Gregory of Narek and St. Nerses the Gracious. The word “Translator” means “Interpreter”. Comprehending and precisely understanding the demands of that period, the Holy Translators initiated the sacred work of creating the Armenian alphabet and literature. By the strength of their faith they dispersed the darkness and warmed the human souls. Thanks to the Holy Translators the Holy Bible was translated into Armenian and the Armenian peoples obtained the possibility to read the Holy Book in the native language. By means of their activity the Holy Translators contributed to the spiritual-cultural awakening of Armenia. After the translation of the Holy Bible, many books of Church Father were translated into Armenian, and thanks to this fact many translations, the original copies of which haven’t been preserved, presently exist only in the translated variant and thus the translations have obtained the value of the original.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քեպլէր Նահանգի առողջապահութեան Նախարարին՝ Մոնթրէալի շրջանը վտանգուած է թագաժահրի Covid-19 Նարնջագոյն գօտիի զգուշացման հանգրուանով, որուն որպէս հետեւանք խմբային հաւաքականութեան թողարկման

թիւը՝ կրճատուած է հասնելով **25 հոգիի,**

եւ պարտադրուելով ձեռք առնել առողջապահութեան բոլոր քայլերն ու միջոցները:

Նկատի առնելով համաճարակի ներկայ ընթացքը **առժամաբար կը դադրեցնենք «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ, կատարուող բոլոր տեսակի հիւրասիրութիւններն ու հաւաքները մինչեւ նոր տնօրինութիւն:**

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Ձեր ձեռքէն կ'ընդունուի Նկատի ունենալով հետեւեալ պարագաները.

1. Բոլոր այն անձինք, որոնք հիւանդանալու բարձր հակամետութիւն ունին:
2. Ձեր անմիջական շրջանակին կամ ընտանիքին մէջ ոեւէ մէկը վարակուած է Թագաժահր Covid-19-ով եւ կամ ունին հետեւեալ պիտանշանները՝

- Ձերմութիւն
- Հազ
- Կոկորդի ցաւ
- Հոտարութեան կամ համի զգալի պակաս

եւ կամ կատարած են Քեպլէր Նահանգէն դուրս ճամբորդութիւն:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Կարելի է Նաեւ առցանց նուիրատուութիւններ կատարել այցելելով
Եկեղեցւոյ կայքէջը՝ saintgregory.ca

Faire un don



ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

AVERTISSEMENT

Nous informons nos fidèles que selon le Ministre de la Santé et le Directeur de la Santé publique, la région de Montréal se trouve en zone orange de la pandémie coronavirus Covid-19. Par conséquent le nombre de fidèles assistant aux offices religieux est limité à **25 personnes**. Compte tenu de l'évolution actuelle de la pandémie, **nous suspendons temporairement tous types de réceptions et rassemblements dans la salle « Vatché Hovsepian ».**

Nous vous souhaitons santé, bien-être et espérons vous tenir informé de tout changement futur ou d'autres détails.

S'abstenir d'aller à l'église

- 1- Tous ceux qui ont un risque élevé de tomber malade.
- 2- Si quelqu'un dans votre environnement immédiat ou un membre de votre famille est actuellement infecté par le covid-19 et/ou présente les symptômes suivants :

- Fièvre
 - Toux
 - Mal de gorge
 - Perte de l'odorat ou du goût
- ou a voyagé en dehors du Province de Québec

Vous pouvez également faire des dons en ligne en visitant le site web de l'église saintgregory.ca

Faire un don



BUREAU DE L'ÉGLISE

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԻՐԱԿԻ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

Առաջնորդ սրբազան հոր թելադրանքով եւ նախաձեռնութեամբ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ Ծխական տորիւրդին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յանուն Հայրենիքի ազատութեան տեղի ունեցող Արցախի ճակատամարտին մեր քաջարի զինձառայող հերոսներու յաւետ յիշատակին:

Նորոգ հանգուցեալներ՝

Եղոյան Արսեն Մերուժանի, ծնվ. 2001թ.

Ստեփանյան Լյոն Համլետի, ծնվ. 2001թ.

Առաքեյան Էդգար Արայիկի, ծնվ. 2000թ.

Առաքեյան Վահե Արայիկի, ծնվ. 2000թ.

**Մկրտչյան Սարիբեկ Հովհաննեսի, ծնվ.
2000թ.**

**Բաբայան Սուրեն Հարությունի, ծնվ.
2000թ.**

Միկիչյան Գագիկ Սմբատի, ծնվ. 2001թ.

Լոգյան Արտյոմ Էդվարդի, ծնվ. 2001թ.

Պետրոսյան Վաչե Արարատի, ծնվ. 1996թ.

**Կամավորական Հովհաննիսյան Կարեն
Ստեփանի, ծնվ. 1997թ.**

Գրիգորյան Արսեն Վրեժի, ծնվ. 2001թ.

Մկրտչյան Արամ Միերի, ծնվ. 2002թ.

Ղյոնոյան Գոռ Հովսեփի, ծնվ. 2000թ.

Գալստյան Երեմ Վանուշի, ծնվ. 1979թ.

Երանոսյան Արթուր Դերենիկի, ծնվ.
1995թ.

Արզումանյան Դավիթ Վլադիմիրի, ծնվ.
1986թ.

Մարտիրոսյան Ալբերտ Բարեղամի, ծնվ.
1995թ.

Սարգսյան Գառնիկ Վարդանի, ծնվ.
1990թ.

Մալխասյան Գառնիկ Լեռնիկի, ծնվ.
1991թ.

Խաչատրյան Դերենիկ Խաչիկի, ծնվ.
1996թ.

Վարդազարյան Աշոտ Յուրիի, ծնվ. 1985թ.

Գորոդնիչի Եվգենի Ագբերի, ծնվ. 1993թ.

Հակոբյան Տարոն Հակոբի, ծնվ. 1987թ.

Աբրահամյան Արշակ Արարատի, ծնվ.
2002թ.

Մանուկյան Մաքսիմ Հակոբի, ծնվ. 2002թ.

Դավոյան Էդուարդ Արսենի, ծնվ. 2001թ.

Խաչատրյան Ալբերտ Արմենի, ծնվ. 1994թ.

Հակոբյան Մուշ Միերի, ծնվ. 1999թ.

Ասլանյան Վան Արմենի, ծնվ. 2001թ.

Ստեփանյան Ալեն Արտուշի, ծնվ. 2001թ.

Մարգարյան Էդգար Հրաչյայի, ծնվ.
2000թ.

Գրիգորյան Միշա Մելիքի, ծնվ. 2001թ.

Ղուկյան Դավիթ Հենգելի, ծնվ. 2002թ.

Ղազարյան Հարություն Ահարոնի, ծնվ.
2001թ.

Մկրտչյան Արման Կարենի, ծնվ. 2001թ.

Գալստյան Ռուստամ Գագիկի, ծնվ. 2001թ.

**Գալեյան Մխիթար Գարիկի, ծնվ. 2000թ.
Բեգլարյան Սերժ Արմենի, 2000թ.
Հակոբբեիսյան Սերժ Սերգեյի, ծնվ.
2000թ.**

**Հարությունյան Միհրան Գագիկի, ծնվ.
2001թ.**

**Մուրադխանյան Գրիգոր Վարուժանի,
ծնվ. 2001թ.**

Եգանյան Միքայել Արարատի, ծնվ. 2001թ.

Չիպլիչ Արտեմ Գագիկի, ծնվ. 2002թ.

Ազատյան Արման Վիգենի, ծնվ. 2000թ.

Բախշիյան Կամո Սերգեյի, ծնվ. 1988թ.

Կարապետյան Գոռ Կարենի, ծնվ. 2001թ.

Հարությունյան Արմեն Արշակի, ծնվ.

2001թ.Մանուկյան Գոռ Վիգենի, ծնվ.

1991թ.

Բագիյան Գյորգ Ալբերտի, ծնվ. 1976թ.

Կամավորական Մովսիսյան Սլավա

Վլադիմիրի, ծնվ. 1978թ.

Կամավորական Առաքելյան Նորայր

Վլադիմիրի, ծնվ. 1960թ

Հոգիներուն ի հանգիստ



Տ. ԵԼ ՏԻԿ. Մուրատ ԵԼ Չուարթ Թագևորեանի,
Տ. ԵԼ ՏԻԿ. Նուրհան ԵԼ Յասմիկ Ճանքուլի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց ԵԼ մեծ ծնողաց՝

ԳԵՈՐԳ ԵՒ ԱՐՇԱԼՈՅՍ

ՃԱՆՔՈՒԼԻ

(KEVORK & ARSHALUYS CANKUL)

Հոգիներուն ի հանգիստ

Ինչպէս նաեւ

**ՃԱՆՔՈՒԼ ԵՒ ԱՂԱՄԵԱՆ
(CANKUL & ATAMIAN)**

Գերդաստաններու համայն ննջեցելոց
Յոգիներուն ի հանգիստ



Արոյեան ընտանիքի
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝

**ՆԵՐՍԵՍ ԱՐՈՅԵԱՆԻ
(NERSES AROYAN)**

Մահուան 12-րդ տարելիցին առիթով:
Իրենց սիրեցեալ մեծ հայրերուն՝

**ԱՐՄԵՆԱԿ ԱՐՈՅԵԱՆԻ
(ARMENAG AROYAN)**

**ՄԻՅՐԱՆ ՄԱՂԱՔԵԱՆԻ
(MIHRAN MAGHAKIAN)**

Ինչպէս նաեւ

ԱՐՈՅԵԱՆ, ՄԱՂԱՔԵԱՆ ԵՒ ՔԵՇԻՇԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ



**ՅԻՇԱՏԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
ԵՂԻՑԻ**

ՅՈԳԵՅԱՆԳԱՍՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,
գթա քո արարչական սիրովդ

ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:

Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:

Արա արժանի ողորմութեան քաւութեան
եւ թողութեան մեղաց:

Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո
յաջակողմեան դասուն:

Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.

դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:

Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Արդեօք Գիտեի՞ք թե՛.-

Ի՞նչ ըրին առաքելները Տիրոջ հրաշափառ յարութենէն յետոյ:


Հտետելով Տիրոջ վերաբերեալ պատգամներուն՝ առաքելները ամենուր կը քարոզէին Քրիստոսով աւետարանուած փրկութիւնը եւ կը մկրտէին հաւատացեալները: Առաջին հաւաքական նմատիպ Ս. Մկրտութիւնը տեղի ունեցաւ ճիշդ Հոգեգալուստին, երբ Ս. Հոգին կրակէ լեզուներու տեսքով իջաւ առաքելներուն վրայ: Երբ այդ օրը Ս. Պետրոսի քարոզութենէն յետոյ մարդիկ անոր հարցուցին, թէ ինչ ընեն փրկուելու համար, առաքելը անվարան պատասխանեց. **«Ապաշխարեցէ՛ք եւ ձեզմէ իւրաքաչիւրը թող մկրտուի Տէր Յիսու Քրիստոսի անունով մեղքերու թողութեան համար, եւ պիտի ընդունիք Ս. Հոգիին պարգեւը»** (Գործք. 2.38): Այդ ժամանակ Քրիստոսի եկեղեցին համալրուեցաւ շուրջ 3000 անդամով (Գործք. 2.41): Այնուհետեւ Ս. Փիլիպոսը մկրտեց Կանդակա թագուհիին ներքինին (Գործք. 8.38), Ս. Պետրոսը՝ Կռնելլիոս հարիւրապետին՝ իր ընտանիքին եւ ուրիշներուն հետ (Գործք. 10.47-48), Ս. Պօղոսը՝ լիդիային (Գործք. 16.15), բանտապետին՝ իր ընտանիքով (Գործք. 16.33), Կրիսպոսին՝ իր ամբողջ տունով եւ Կորնթացիներէն շատերուն (Գործք. 18.8), մի քանի աշակերտներով՝ Եփեսոսի մէջ, որոնք նախապէս Ս. Յովհաննէս Մկրտիչի մկրտութեամբ մկրտուած էին (Գործք. 19.1-5): Ահա դարեր շարունակ Հայոց եկեղեցին ալ առաքելներէն մեզի փոխանցուած տէրունահաստատ այս խորհուրդը կը կատարէ անխափան եւ անաղարտ՝ իր Ս. Աւագանէն ծնունդ տալով նոր քրիստոնեաներու:

Եկեղեցիով չամուսնացած զոյքի երեխան կրնա՞յ մկրտուի:

Այո՛, բայց ճիշդ կ'ըլլայ, որ ծնողքը իրենց ամուսնութիւնը վաւերացնեն նաեւ՝ եկեղեցական Ս. Պսակով:

Արդեօք կա՞ն Ս. Մկրտութեան համար արգիլուա թուականներ:

Ո՛չ: Եթէ Ս. Պսակի պարագային արգիլուած օրեր կան, ապա Ս. Մկրտութիւն կարելի է կատարել տարուան բոլոր օրերուն:



ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐ / OCTOBRE

12, Երկուշաբթի – Տօն Գիւտի Նշխարաց Սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին եւ Սրբոց Յարցն Թաթլոյ, Վարոսի, Թումասու, Անտոնի, Կրօմիրդիայի եւ 7 խոտաճարակացն որք յիննակնեայ վանսն կատարեցան:

Lundi 12 – Fête de la découverte des Stes reliques du St Cathlicos Grigoris d'Aghouanie, des Sts pères Tatoul, Varos, Thoumas, Anton, Cronid et des sept végétariens du monastère de Innaguèniats.

13, Երեքշաբթի – Տօն Սրբոց առաքելոցն՝ Անանիայի, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպոսի, Յովհաննու, Շիղայի եւ Սիդոնոսի:

Mardi 13 – Fête des Saints apôtres, Anania, Mathias, Barnabas, Philippe, Jean, Chila et Silouane.

**14 Չորեքշաբթի – Պահք:
Mercredi 14 – *Jeûne.***

15, Հինգշաբթի – Տօն Սրբոցն Դիոնեսիոսի Արիսպագացւոյն, առաքելոցն Տիմոթէոսի եւ Տիտոսի:

Jeudi 15 – Fête de Saint Dyonisios l'Aéropagite, des apôtres Thimotée et Didos.

**16, Ուրբաթ – Պահք:
Vendredi 16 – *Jeûne.***

17, Շաբաթ – Տօն Սրբոց Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու:

Samedi 17 – Fête des Saints évangélistes, Mathieu, Marc, Luc et Jean.

Շաբթուայ խորհրդածութիւններ



«Դուն մի՛ վախնար, քանզի ես քեզի հետ եմ, մի՛ խաբուիր, քանզի ես եմ քու Աստուածդ, ես, որ զօրացուցի քեզի, օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջովս»
(Եսայի 41.10)

Լաւատեսութիւնը կու գայ հաւատքէն եւ յոյսէն: Հաւատք, ուր Աստուած ողորմած է եւ յոյս, ուր Ան կը պատրաստուի գործել:

Շենուդա Գ հայրապետ

Արիութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ անտեսանելի թշնամիներու հակառակութեան ժամանակ ճշմարտութեան մէջ մնալ:
Ս. Աստոն Մեծ

Շատերուն կը թուի, թէ սուրբերը մեզմէ հեռու են: Բայց անոնք հեռու են անոնցմէ, որոնք իրենք հեռացած են եւ շատ մօտ են անոնց, որոնք Քրիստոսի պատուիրանները կը պահեն... անոնք կը լսեն մեր աղօթքները եւ մեր հոգիները կը զգան, որ անոնք մեզի համար կ'աղօթեն:
Ս. Սիվղանոս Աթոսացի

Նեղութիւնները կը սորվեցնեն մեզ աղօթել եւ Աստուծոյ ողորմածութեան ներկայութիւնը զգալ: Այնպէս որ, փառք Աստուծոյ ամէն ինչի համար:
Իոանն վրդ. Քրետեանսկին

Միշտ խուսափիր վնասակար հաւաքոյթներէ, եւ քու հոգիդ կը վայել լուրթեան քաղցրութիւնը:
Ս. Եփրեմ Ասորի



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ ԵՒ ԵՐԵԿՈՅԵԱԼ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ Յեռարձակում – Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Հաւատք, Մեր, Լոյս
Եւ Կեանք:

Ամեն Զորեքշաբթի

1 Հոկտեմբեր 2020 սկսեալ երեկոյեան ժամը 5:00-ին:

Արժ. Տ. Դաւիթ Զինյ. Մարգարեանի հետ:

MESSAGE SPIRITUELLE
ET SERVICE DU SOIR

avec le R.P. David Margaryan

Chaque Mercredi

à partir du 1^{er} Octobre 2020 à 17h00.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից
ըլլալու Աստուածաշնչական նիւթերուն
առցանց եկեղեցւոյ դիմատետրի էջով:

Nous invitons nos chers fidèles à participer à ces séances
d'interprétations bibliques via la page Facebook de l'Église.

Հաճելի հոգեւոր պահեր կը մարդենք մեր հետեւորդ
հաւատացեալներուն:

Nous souhaitons a nos fidèles des moments spirituels
agréables.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ ԿԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ



Այս յայտարարութեամբ կը փափաքինք մեր հաւատացեալներուն ուշադրութեան յանձնել թէ՛ Յուդարկաւորութեան կարգի ծրագրաւորման պարագային, նախքան որեւէ այլ գործընթացի ձեռնարկելը, համեստօրէն կը խնդրուի առաջին հերթին հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ եւ ժամադրուիլ հոգեւոր հովիւին հետ խորհրդակցութեան համար, որպէսզի ճշգրտօրէն կատարուին այն նախաձեռնութիւնները, որոնք պիտի կիրարկուին ըստ հանգուցեալի ընտանեկան պարագաներու յարմարութեան իրավիճակին:

Անգամ մը ես կը փափաքինք շեշտել, Եկեղեցւոյ ծառայութեան մատուցման կարեւորութիւնն ու առաջնահերթութիւնը, որպէսզի կարենանք պատշաճօրէն կիրարկել մեր Եկեղեցապատկան ծառայութիւնը, զերծ մնալով որեւէ թիւրիմացութենէ եւ անպատեհ շարժառիթէ, օրինակ՝ դիակիզումի պարագային, յուդարկաւորութեան կարգը կը մատուցուի նախքան հրկիզումը, այլապէս, հրկիզուած մոխիրին վրայ արտօնուած չէ յուդարկաւորութեան կարգ կատարել որեւէ մէկ ձեւով, ըստ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծիսակատարութեան կանոններուն:

Հետեւաբար, մեր յորդորն է անմիջապէս կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակին հետ, հեռաձայնելով՝ (514) 279-3066 թիւին, կազմակերպելու յուդարկաւորութեան կարգին հետ առնչուող հարկ եղած կարգաւորումները:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հուատացեալներ,

Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեզոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց հողաթափեր
- Սկիի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջատներ
- Մեծ Պահրի կամ Աւագ շարթւոյն յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մտուր
- Եկեղեցոյ տօնաձառ
- Ճրագալոյցի եւ Տեառնդատաջի համար նախատեսուած դուրսի մոմեր
- Ջրօրհնէրի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սև

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբոլխ նուիրատութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«Այս երկրի մէջ ցանէ՛րու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնէս»:

«Հոգեւոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,
Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ